ՇԱՄԵԱՆ

Մսուրի գիւղից մի ժամ ճանապարհորդեցինք, մեր ձախ կողմն ճանապարհէն ¼ ժամ ի հիւսիս արևելս 27 քուրդ տուն բնակչօք Շամեան գիւղն մեր առջև պարզուեցաւ։ Այժմ մեզ տեսանելի է այս գիւղի վերայէն Թ. գալէն ի հիւսիս։

Շամեան Մսուրի գիւղէն 1 ¼ ժամ ուղղակի արևելք Խոփուզայ ջրի աջ ափին վերայ շինուած և դաշտիս ուղղակի միջավայրն է. ունի բերրի արտօրայք, առատ աղբերակունք, քաւշանը սահմանակից է Մսուրիի, Մօլլա-սիւլէյմանայ, Թ. գալէի, Դաւոյի, Զուրուկի և Զլկանի գիւղօրէից քաւշաններուն։

Թ. գալէէ ընդ մէջ հարաւոյ և հարաւ արևմտեան ուղղութեամբ մի ճանապարհով կանցնինք Շամեան գիւղն, ուսսի Զուրուկ կամ Դաւոյ, յորմէ Շեռեան անցնելով կը բարձրանամք Սուրբ Գէորգ կոչուած ուխտատեղին, որ ըստ ժողովրդեան «Սուրբ Սուքիասանց ընկերներէն է, Ցաղկանց լեռնէն խոյս տուած միջոցին Սուրբ Գէորգ ճանապարհին հիւանդացած՝ այս վայրը վախճանած է.» այժմ յարգելի ուխտատեղի է։

ՍՈՒՐԲ ՍՈՒՔԻԱՍԱՆՔ

1887 օգոստոս 2-ի առաւօտուն՝ այլ և այլ գիւղերէ հաւաքուած ուխտաւորներուն հետ ուղղուեցանք ի հիւսիս, Մօլլա-Սիւլէյման գիւղից ¼ ժամ Կռաւայ ձորն ի վեր բարձրանալէ յետոյ, դարձանք աջ թեւի վերայ, անցանք հորերու քեղէ սարի արևմտեան